ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 80

ք. Երևան 10.09.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կենտրոնախույս պոմպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-10/25» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտ էր ներկայացրել «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ-ն: Ուսումնասիրելով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-10/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում մասնակցի կողմից ներկայացված հայտը, գնահատող հանձնաժողովն արձանագրել էր, որ «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ-ի մոտ առկա էին անհամապատասխանություններ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 24.08.2023թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցվել է «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը արձանագրված անհամապատասխանությունը:

29.08.2023թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունները շտկվել էին մասամբ:

Ուստի, գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջները՝ որոշեց մերժել վերջինիս հայտը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը՝ որոշում եմ «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ